ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1)

ք. Երևան «25» հունվարի 2018 թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գարուշ Պապիկյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **258 000 000 (երկու հարյուր հիսունութ միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 7.13 կետով նախատեսված կնքվելիք համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է

համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Մովսես Խորենացու 3	Իրավ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Կոմիտաս 36գ,բն 78
ՀՎՀՀ 02647057	Գործ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Արշակունյաց 34/3
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի	«Ամերիաբանկ» ՓԲԸ
աշխատակազմի ղեկավար	Հ/Հ 1570018464820100
	ՀՎՀՀ 00130286
	Տնօրեն
Ա.Սահակյան _____	Գ. Պապիկյան _____
(ստորագրություն)Կ.Տ	(ստորագրություն)Կ.Տ

Հավելված N 1
«25» հունվարի 2018 թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1) ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության						
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման ժամկետը և հասցեն
1	**մաքրման ծառայություններ 98341130/307**	**Կատարողը պարտավոր է ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցվող՝ 80493.5 քմ. տարածքներում իրականացնել մաքրման հետևյալ ծառայությունները՝** **1. Ամենօրյա մաքրման ծառայություններ** ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի -ապակիների, բռնակների, պատերի, վարդակների, դռների, ջեռուցման մարտկոցների և պատուհանագոգերի վրայից մատնահետքերի և կեղտաբծերի մաքրում, -նախամուտքերի մաքրում, -բոլոր գրասենյակային սեղանների, պահարանների, տեխնիկայի մաքրում, - Սանհանգույցների ամենօրյա իդեալական մաքրում քիմիական նյութերով /սալիկապատ մակերեսների լվացում և ախտահանում,հայելիների մաքրում, փայլեցում,լվացարանների, զուգարանակոնքերի և դրանց հարող մակերեսների մաքրում և ախտահանում/, կատարողի կողմից գրառում կատարելով փակցված գրաֆիկի վրա՝միայն քաղաք Երևանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-Ի կողմից զբաղեցվող տարածքների համար - աղբամանների դատարկում, մաքրում,տոպրակների տեղադրում	**քմ**	**258 000 000**	1. 9253,15 2. 1994,2 3. 1812.4 4. 5102.4 5. 1797 6. 4440,1 7. 2628,7 8. 1250,3 9. 1661,6 10. 1242,7 11. 2343.4 12. 4392,6 13. 4817.4 14. 731,6 15. 490,0 16. 1441,7 17. 634,1 18. 109,6 19. 473,7 20. 712,1 և 969 21. 488,0 22. 1008,2 23. 614.2 24. 1269,0 25. 44,0	Ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 350 օրացույցային օրվա ընթացքում: 1. ք.Երևան Մ.Խորենացու փ.թիվ 3, 7, 7ա, 7/1 և 7ա/4 շենքեր 2. ք.Երևան, Հույսիսային փ. 6 3. ք. Երևան, Ահարոնյան 12/3 4. ք.Երևան, Արարատյան 90 5. ք.Երևան, Սևանի 104/2 6. ք. Երևան, Կոմիտաս 35 7. ք. Երևան, Դեղատան-3 8. ք.Երևան, Սասունցի Դավթի 87 և 87ա 9. ք.Երևան, Շինարարների 3/1 10. ք.Երևան, Մանթաշյան-55 11. ք.Երևան, Մոլդովական 41/3 12. ք. Երևան, Արշակունյաց-127/21 13. ք.Երևան, Ծով. Իսակովի պող.

		-գորգերի փոշեզերծում փոշեկուլով **2. Շաբաթական մաքրման ծառայություններ** -Սանհանգույցի սալիկների ախտահանում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ domestos կամ համարժեք նյութերով -գորգերի փոշեզերծում փոշեկուլով, -սալիկապատ հատակների լվացում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ Mr. Proper կամ համարժեք նյութերով -մանրահատակի մաքրում և լվացում բարձրորակ մասնագիտացված հատուկ նյութերով՝ Pronto կամ համարժեք նյութերով **3. Ամսական մաքրման ծառայություններ** -ջահերի, լույսերի, օդրակիչների, շերտավարագույրների, վարագույրների, տեղեկատվական վահանակների, դրսի ապակիների մաքրում: **4. Տարեկան մաքրման ծառայություններ** Տարին երկու անգամ նշված հասցեներում շենքերի ճակատային մասի լվացում՝ բարձր ճնշման ջրամղիչ սարքով: գորգերի լվացում՝ չոր մաքրում, տարեկան 6 անգամ: ՀՀ ԿԱ ՊԵԿ սահմանային մաքսային անցակետերում կատարողը պետք է ապահովի առնվազն 2 հերթապահ՝ 24 ժամյա աշխատանքային գրաֆիկով: ՀՀ ԿԱ ՊԵԿ Վարչական շենքում՝Խորենացի 3,7 և 7Ա հասցեներում, առնվազն 8 հերթապահ՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին պատկանող հարակից տարածքների մաքրում: Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի համապատասխան համազգեստով՝ կատարողի տարբերանշանով: **Կատարողը պարտավոր է ՀՀ ԿԱ ՊԵԿ վերադաս մարմնի վարչական շենքում և տարածքային ստորաբաժանումների կողմից զբաղեցվող տարածքներում ծառայությունը մատուցելու համար ունենա հետևյալ սարքավորումները՝** • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք,			26. 986.6 27. 472,3 28. 266.8 29. 173,9 30. 952,3 31. 1123,9 32. 1420.2 33. 99.3 34. 522.6 35. 288,1 36. 100,0 37. 2767,9 38. 985,0 39. 387.9 40. 6692,6 41. 3520,0 42. 25,0 43. 450.4 44. 841.7 45. 6692,6 46. 21.000	թիվ 10 14. ք. Երևան, Անդրանիկի 37/1 15. «Զվարթնոց» օդանավակայան, Երևան - 42 16. ք.Աշտարակ, Պռոշյան 29 17. ք. Էջմիածին, Մաշտոցի 81 18. ՀՀ Արմավիրի մարզ, ք.Էջմիածին, Զ. Անդրանիկի 2 19. ք. Արմավիր, Չարենցի 24 20. ք.Արտաշատ, Օգոստոսի 23, փող.-83 21. ք. Գավառ, Հերոս քաղաք Նովոռոսաիյսկի փող. 4 22. ք.Գյումրի, Հովսեփյան 1 23. ք.Եղեգնաձոր, Նարեկացի-8/3 24. ք.Իջևան, Անկախության - 12 25. ՀՀ Տավուշի մարզ, ք.Նոյեմբերյան, Երևանյան-4 26. ք.Կապան, Ռ. Մինասյան 20ա 27. ք.Գորիս, Տաթևացի 9 28. ք.Սիսիան, Սիսական-41գ 29. ք.Մեղրի, Անդրանիկի-2/11, 2/12 30. ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 31. ք.Հրազդան, Սպանդարյան-24/1-24/2 32. ք.Վանաձոր, Վարդանանց -11 33. ք.Ալավերդի, Թումանյան 1ա 34. ք.Տաշիր, Կալինինի թաղ.-6 35. Սյունիքի մարզ, Սիսիան-Երևան մայրուղու 7-րդ կմ, Շաքե համայնք 36. Սյունիքի մարզ, Գորիս-Երևան մայրուղու կից վարչ. Շենք, Շաքե համայնք 37. Սյունիքի մարզ, գ.Կարճևան Մայրուղի-4 38. ք.Վանաձոր Մոսկովյան 44 39. ք.Վանաձորի Մոսկովյան փ. թիվ 42ա /անգար/

		գլանաձև խոզանակով, հատուկ լվացող և չորացնող սարք՝ ներքին տարածքների լվացման համար (մեծ տարածքների համար նախատեսված) 1ժ.-2000մ2(2 հատ) • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք, հզորությունը՝ առնվազն 2000-2200 Վտ լվացող փոշեկուլ (2 հատ) • Շարժական վերհան երկհենակ հարթակ էլեկտրական՝ 12 մետրանոց (1 հատ) • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք, պրոֆեսիոնալ փոշեկուլներ 2 շարժիչով (3 հատ) - հետշինարարական աշխատանքների համար նախատեսված: • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք, հզորությունը առնվազն 2000Վտ, պրոֆեսիոնալ փոշեկուլներ, նախատեսված փոքր տարածքների համար (40 հատ) • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք, 2 գլանաձև խոզանակով, հատակ լվացող և փայլեցնող սարք(միջին տարածքների համար) 1ժ.-1200մ2 (5 հատ) • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք բարձր ճնշման ջրամղիչ սարք, հզորությունը առնվազն 145 Բառ, մեկ ֆազանի (4 հատ) • <<KARCHER>> մակնիշի կամ համարժեք, 2 խոզանակով սիլիկոգելով աշխատող, գորգերի չոր մաքրման սարք (1 հատ)				40. Տավուշի մարզ, Այրում համայնք, գ.Բագրատաշեն 41. Լոռու մարզ,գյուղ Գոգավան 42. Լոռու մարզ,գյուղ Պրիվոլնոյե 43. գ.Այրում Երկաթուղային 20 44. ք.Գյումրի Մ.Խորենացի 21 45. գ.Բավրա, մաքսակետի շենք 46. Շենքերի ճակատային մաս
Այլ Պայմաններ	Կատարողը պարտավոր է այնպես կազմակերպել մաքրման ծառայությունները, որպեսզի կատարողի կողմից մաքրված տարածքը ցանկացած պահի լինի պատշաճ մաքրված վիճակում և չխոչընդոտի ՀՀ ԿԱ ՊԵԿ բնականոն աշխատանքային գործունեությունը: Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող նյութերը և սարքավորումներն ամբողջությամբ պետք է ապահովվի կատարողի կողմից: Մաքրման ծառայությունների կազմակերպման ժամերը նախապես համաձայնեցվում են Պատվիրատուի հետ, ընդ որում կատարողը պարտավոր է ապահովել ցերեկային և գիշերային հերթապահություն (գիշերային հերթապահությունը միայն ՀՀ ԿԱ ՊԵԿ սահմանային մաքսային անցակետերում): Ապահովել առնվազն կոնտակտային 2 անձի առկայությունը, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագրի կնքման օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում կատարողը պարտավոր է իր մոտ աշխատանքի ընդունի ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմում աշխատող հավաքարարներին՝ թվով 180 հոգի, աշխատավարձի չափը փոփոխման չենթարկելով (80.000 ՀՀ				

	դրամ) և 1 տարվա ընթացքում առանց պատվիրատուի թույլտվության չլուծելով հավաքարարների աշխատանքային պայմանագրերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար

Ա.Սահակյան
(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Քլիներս» ՍՊԸ
Իրավ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Կոմիտաս 36գ,բն 78
Գործ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Արշակունյաց 34/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464820100
ՀՎՀՀ 00130286
Տնօրեն

Գ. Պապիկյան
(ստորագրություն)Կ.Տ

Հավելված 2
«25» հունվարի 2018 թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1) ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ՝ «____» «_____» 20 թ. Դուրս գրված N հաշիվ-ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«25» հունվարի 2018թ. կնքված
ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1) ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
25.01.2018թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1) ՄԱՔՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

«5» ապրիլի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քլիներս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գարուշ Պապիկյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 25.01.2018թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1) գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.13-րդ կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Հաստատել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից N-1 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի /կցվում է/:

1.2 Նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում ծառայությունների մատուցման ժամկետ սահմանել 262 օրացուցային օր:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ 25.01.2018թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1) պայմանագրի կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ::

2.4. Սույն համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	«Քլիներս» ՍՊԸ
ք. Երևան, Մովսես Խորենացու 3	Իրավ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Կոմիտաս 36գ,բն 78
ՀՎՀՀ 02647057	Գործ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Արշակունյաց 34/3
Հ/Հ 900013202016, 900013574018	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի	Հ/Հ 1570018464820100
աշխատակազմի ղեկավար	ՀՎՀՀ 00130286
	Տնօրեն
Ա.Սահակյան _____ (ստորագրություն)Կ.Տ	Գ. Պապիկյան _____ (ստորագրություն)Կ.Տ

Հավելված 1
25 հունվարի 2018թ. կնքված N ՀՀԿԱ-ՊԵԿ-ՀԲՄԾՁԲ-(18/1)
պայմանագրի հիման վրա 5 ապրիլի 2018 թ.կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգ. հոդվածը	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2018 թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	4239	Մաքրման ծառայություններ	43 000 000	43 000 000	43 000 000	107 500 000	107 500 000	107 500 000	193 500 000	193 500 000	193 500 000	**193 500 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար

Ա.Սահակյան _____
(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Քլիներս» ՍՊԸ
Իրավ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Կոմիտաս 36գ,բն 78
Գործ.հասցե՝ ՀՀ ք.Երևան,Արշակունյաց 34/3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570018464820100
ՀՎՀՀ 00130286
Տնօրեն

Գ. Պապիկյան _____
(ստորագրություն)Կ.Տ